

**ԹԻՎ 21 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**«10» նոյեմբերի 2023թ.**

ք. Մարտունի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 1-Ա**

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ  
ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ)  
ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ  
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ**

**ՍԻՐԱԿ ՎՐԵԺԻ ՍԻՐԱԿԱՆՅԱՆՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի համամասնական ընտրակարգով անցկացված համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Սիրակ Վրեժի Սիրականյանը 2023 թվականի նոյեմբերի 10-ին թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացրել է ինքնաբացարկի մասին դիմում: Դիմումը նոտարական կարգով վավերացված է:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 137-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության առաջին նախադասության համաձայն՝ «Թեկնածուն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո իրավունք ունի հանելու իր թեկնածությունը»:

Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝

«Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված անձանց կողմից ներկայացված ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու դիմումները վավերացվում են նոտարական կարգով, կամ համապատասխան դիմումը անձը հաստատում է ընտրական հանձնաժողովի նիստում: Նոտարական կարգով վավերացված՝ ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու մասին դիմումը սույն հոդվածի իմաստով համարվում է վավեր, եթե այն



ընտրական հանձնաժողով է ներկայացվում վավերացվելուց հետո՝ առավելագույնը եռօրյա ժամկետում:

Ինքնաբացարկի մասին դիմում ներկայացնելու դեպքում քաղաքացու անունը, ազգանունը հանվում է ընտրական ցուցակից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով»:

Թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 10.11.2023թ. նիստին ներկայացել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Սիրակ Վրեժի Սիրականյանը և հաստատել ինքնաբացարկի մասին իր դիմումը:

Ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության համաձայն՝

«Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ընտրական հանձնաժողովի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին:»:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասով՝ թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի համամասնական ընտրակարգով անցկացված համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Սիրակ Վրեժի Սիրականյանի գրանցումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

**Թիվ 21 ընտրատարածքային ընտրական  
հանձնաժողովի նախագահ՝**



**Ա.Սարգսյան**